Ուսումնառություն՝ գիտելիքի սահմաններից դուրս

Մարիանա Ավետիսյան, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կիրառական հոգեբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար

Ի՞նչ պետք է անի ուսանողը, երբ ճշմարտությունն ասելը կարող է ցավեցնել ընկերոջը: Ինչպե՞ս պետք է արձագանքի ապագա մասնագետը, երբ անձնական շահերը բախվում են արդարության հետ: Արդյո՞ք միշտ է հեշտ տարբերակել օրենքով թույլատրելին, սոցիալապես ընդունվածը և բարոյապես ճիշտը:

Այսպիսի հարցերն առօրյա կյանքի մասն են: Դրանք հազվադեպ են ունենում պարզ պատասխաններ և հաճախ պահանջում են ավելին, քան փաստացի գիտելիքը: Դրանք պահանջում են քննադատական մտածողություն, էմպատիա, պատասխանատվություն, տարբեր տեսանկյուններ դիտարկելու կարողություն և սեփական որոշումները հիմնավորելու քաջություն:

Սա հենց այն տիրույթն է, որտեղ կրթությունը կարող է դառնալ ավելի իմաստալից: Փոխանակ կրթությունը սահմանափակելու տեղեկատվության յուրացմամբ՝ մանկավարժները կարող են ուսանողների համար հնարավորություններ ստեղծել՝ ուսումնասիրելու բարդ իրավիճակներ, քննելու ապացույցներ, քննարկելու մրցակցող արժեքներ և ձևավորելու սեփական հիմնավորված դիրքորոշումները:

«Արժեքահեն և գիտելիքահեն կրթություն» (VaKE) մոտեցումը առաջարկում է գործնական ուղի՝ այս չափումները մեկտեղելու համար: Այն միավորում է արժեքային կրթությունը գիտելիքի կառուցարկման հետ՝ խրախուսելով սովորողներին հետազոտել բարոյական երկընտրանքներից բխող հարցերը և օգտագործել ձեռք բերած գիտելիքները՝ սեփական որոշումները մշակելու և հիմնավորելու համար [1–3]:

PROVE ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից: Այնուամենայնիվ, արտահայտված տեսակետներն ու կարծիքները պատկանում են բացառապես հեղինակ(ներ)ին և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Կրթության և մշակույթի եվրոպական գործադիր գործակալության (EACEA) դիրքորոշումը: Ո՛չ Եվրոպական միությունը, ո՛չ էլ դրամաշնորհ տրամադրող մարմինը պատասխանատվություն չեն կրում դրանց համար:

Էրազմուս+ «Արժեքներին միտված կրթության խթանումը Հարավային Կովկասում» (PROVE) նախագծի շրջանակներում այս մոտեցումն առաջարկում է շրջանակ՝ արժեքային կրթությունն ամրապնդելու և ինքնանդրադարձող, սոցիալապես պատասխանատու ու քննադատաբար մտածող սովորողների ձևավորմանը աջակցելու համար [7]:

Ինչո՞վ է VaKE-ը տարբերվում

Արժեքային կրթությունը երբեմն ընկալվում է որպես ուսանողներին սովորեցնելը, թե որ արժեքները նրանք պետք է հարգեն: Այնուամենայնիվ, արժեքները իմաստալից են դառնում ոչ թե պարզապես դրանք բացատրելու շնորհիվ, այլ որովհետև սովորողները հնարավորություն են ունենում քննելու դրանք, կասկածի տակ դնելու իրենց ենթադրությունները և կիրառելու դրանք որոշումներ կայացնելիս:

VaKE-ն այս գործընթացին մոտենում է այլ կերպ: Այն կապում է ակադեմիական բովանդակության ուսուցումը բարոյական երկընտրանքի ուսումնասիրության հետ: Ուսանողները բախվում են մի իրավիճակի, որտեղ տարբեր արժեքներ, շահեր կամ պատասխանատվություններ կարող են հայտնվել բախման մեջ: Երկընտրանքը բարձրացնում է հարցեր, որոնց հնարավոր չէ պատասխանել միայն այն տեղեկատվությամբ, որին ուսանողներն արդեն տիրապետում են: Հետևաբար, սովորողները պետք է պարզեն, թե ինչ է իրենց անհրաժեշտ իմանալ, փնտրեն համապատասխան տեղեկատվություն, փոխանակեն փաստարկներ և վերանայեն իրենց նախնական դիրքորոշումները [1–3]:

Ուսուցիչը պարզապես չի տրամադրում ճիշտ պատասխանը: Փոխարենը, նա ստեղծում է կառուցողական ուսումնական միջավայր, որտեղ ուսանողները կարող են հետազոտել խնդիրը և սովորել միմյանցից: Սա չի նշանակում, թե բոլոր կարծիքները հավասարապես լավ հիմնավորված են կամ որ յուրաքանչյուր որոշում էթիկապես

PROVE ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից: Այնուամենայնիվ, արտահայտված տեսակետներն ու կարծիքները պատկանում են բացառապես հեղինակ(ներ)ին և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Կրթության և մշակույթի եվրոպական գործադիր գործակալության (EACEA) դիրքորոշումը: Ո՛չ Եվրոպական միությունը, ո՛չ էլ դրամաշնորհ տրամադրող մարմինը պատասխանատվություն չեն կրում դրանց համար:

ընդունելի է: Ուսանողներին խրախուսվում է տարբերակել ենթադրությունները ապացույցներից, դիտարկել իրենց ընտրության հետևանքները և աջակցել իրենց փաստարկներին համապատասխան գիտելիքներով ու հստակ դատողություններով:

Ուսուցիչների կրթության ոլորտում VaKE-ի հետազոտությունները ուսումնասիրել են, թե ինչպես այս մոտեցումը կարող է կապել առարկայական ուսուցումը էթիկական անդրադարձի հետ և խրախուսել ապագա ուսուցիչներին վերանայել ուսուցման ու ուսումնառության մասին ենթադրությունները [2, 4]:

Կենտրոնական գաղափարն այն է, որ գիտելիքն ու արժեքները չպետք է դիտարկվեն որպես առանձին կրթական նպատակներ: Գիտելիքն օգնում է սովորողներին հասկանալ իրավիճակը, մինչդեռ արժեքներն օգնում են նրանց խորհել, թե ինչ պետք է անեն դրա շրջանակներում: VaKE-ն միավորում է այս չափումները ակտիվ հարցադրումների և երկխոսության միջոցով:

Իրական իրավիճակները ուսումնական հնարավորությունների վերածելը

Ամենակարևոր առանձնահատկություններից մեկը դրա գործնական ուղղվածությունն է: Երկընտրանքը կարող է սկսվել դպրոցական, ընտանեկան կյանքից, մասնագիտական պրակտիկայից, սոցիալական հարաբերություններից կամ լայն համայնքից վերցված ծանոթ փորձառությամբ:

Դիտարկենք մի իրավիճակ:

Համալսարանի ուսանողը պարզում է, որ իր մտերիմ ընկերը ներկայացրել է հանձնարարական, որը պարունակում է այլ աղբյուրից արտագրված զգալի նյութ՝ առանց պատշաճ հղման: Ընկերը բացատրում է, որ եղել է մեծ ճնշման տակ, և խնդրում է ուսանողին չհայտնել միջադեպի մասին: Ուսանողը պետք է որոշի, թե ինչպես արձագանքել:

PROVE ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից: Այնուամենայնիվ, արտահայտված տեսակետներն ու կարծիքները պատկանում են բացառապես հեղինակ(ներ)ին և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Կրթության և մշակույթի եվրոպական գործադիր գործակալության (EACEA) դիրքորոշումը: Ո՛չ Եվրոպական միությունը, ո՛չ էլ դրամաշնորհ տրամադրող մարմինը պատասխանատվություն չեն կրում դրանց համար:

Արդյո՞ք ընկերոջ հանդեպ հավատարմությունը պետք է առաջնահերթություն ունենա: Արդյո՞ք ակադեմիական ազնվությունն ավելի կարևոր է, քան անձնական հարաբերությունների պահպանումը: Կարո՞ղ է լինել եղանակ՝ աջակցելու ընկերոջը՝ միևնույն ժամանակ խնդրին պատասխանատու կերպով անդրադառնալով:

Փոխանակ անմիջապես դատելու ուսանողի հնարավոր որոշումը՝ VaKE դասը մասնակիցներին կհրավիրի քննելու երկընտրանքը մի քանի տեսանկյունից:

Նախ, ուսանողները կբացահայտեն առանցքային խնդիրը և ներգրավված արժեքները, ինչպիսիք են ազնվությունը, հավատարմությունը, արդարությունը, պատասխանատվությունը և կարեկցանքը: Այնուհետև նրանք կձևակերպեն հարցեր, որոնք լրացուցիչ հետազոտություն են պահանջում: Ի՞նչ են սահմանում համալսարանի ակադեմիական ազնվության կանոնները: Ինչո՞ւ է կարևոր պատշաճ հղում կատարելը: Ի՞նչ հետևանքներ կարող է ունենալ գրագողությունը մյուս ուսանողների և ակադեմիական համայնքի համար: Աջակցության ի՞նչ ձևեր կարող են օգնել դժվարացող ուսանողին: Հաջորդ քայլը կներառի տեղեկատվության փնտրումը և հնարավոր արձագանքների գնահատումը: Ուսանողները կարող են ուսումնասիրել համապատասխան կանոնակարգերը, վերլուծել օրինակներ և քննարկել որոշումից ազդվող մարդկանց տեսանկյունները: Վերջապես, նրանք կձևակերպեն և կպաշտպանեն իրենց դիրքորոշումները: Նրանք կարող են համաձայնել, չհամաձայնել կամ փոփոխել իրենց սկզբնական տեսակետները՝ այլ փաստարկներ լսելուց հետո:

Այս գործընթացի կրթական արժեքը ոչ թե նախապես որոշված մեկ եզրահանգման հասնելն է, այլ ավելի իրազեկ և պատասխանատու որոշում կայացնել սովորելը: Երկընտրանքը դառնում է ելակետ թե՛ գիտելիքի ձեռքբերման, թե՛ ներգրավված արժեքների շուրջ ինքնանդրադարձի համար [1–3]:

Ինչպե՞ս է գործում VaKE գործընթացը

PROVE ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից: Այնուամենայնիվ, արտահայտված տեսակետներն ու կարծիքները պատկանում են բացառապես հեղինակ(ներ)ին և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Կրթության և մշակույթի եվրոպական գործադիր գործակալության (EACEA) դիրքորոշումը: Ո՛չ Եվրոպական միությունը, ո՛չ էլ դրամաշնորհ տրամադրող մարմինը պատասխանատվություն չեն կրում դրանց համար:

Թեև կոնկրետ կազմակերպումը կարող է տարբերվել՝ կախված սովորողներից, առարկայից և կրթական նպատակներից, VaKE գործունեությունը կարող է կառուցվել մի քանի փոխկապակցված փուլերի շուրջ [1, 3]:

1. Երկընտրանքի ներկայացում՝ Դասախոսը ներկայացնում է իրատեսական իրավիճակ, որը բարձրացնում է էթիկական հարց: Երկընտրանքը պետք է լինի հասկանալի և վերաբերի սովորողներին՝ միաժամանակ թույլ տալով մեկից ավելի հավանական դիրքորոշումներ:

2. Արժեքների և հարցերի բացահայտում՝ Ուսանողները բացահայտում են մրցակցող արժեքները և հստակեցնում են, թե ինչ արդեն գիտեն, ինչ են ենթադրում և ինչ դեռ պետք է պարզեն: Նրանց նախնական արձագանքները ելակետ են հանդիսանում հետագա հարցադրումների համար:

3. Գիտելիքի փնտրում՝ Սովորողները փնտրում են երկընտրանքին առնչվող տեղեկատվություն: Կախված թեմայից՝ սա կարող է ներառել ակադեմիական տեքստեր, գիտական ապացույցներ, մասնագիտական ուղեցույցներ, օրենսդրություն, հարցազրույցներ կամ այլ հավաստի աղբյուրներ:

4. Փաստարկների քննարկում և գնահատում՝ Ուսանողները փոխանակում են իրենց գտած նյութերը, կասկածի տակ դնում ենթադրությունները, դիտարկում այլընտրանքային տեսանկյուններ և քննում տարբեր որոշումների հնարավոր հետևանքները: Դասախոսը ուղղորդում է քննարկումը և խրախուսում հարգալից անհամաձայնությունը:

5. Որոշման վերանայում և հիմնավորում՝ Խնդիրը հետազոտելուց հետո ուսանողները բացատրում են իրենց եզրահանգումները և դրանց հետևում ընկած պատճառները: Նրանք կարող են պահպանել իրենց նախնական դիրքորոշումը կամ փոխել այն՝ նոր տեղեկատվության և փաստարկների լույսի ներքո:

PROVE ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից: Այնուամենայնիվ, արտահայտված տեսակետներն ու կարծիքները պատկանում են բացառապես հեղինակ(ներ)ին և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Կրթության և մշակույթի եվրոպական գործադիր գործակալության (EACEA) դիրքորոշումը: Ո՛չ Եվրոպական միությունը, ո՛չ էլ դրամաշնորհ տրամադրող մարմինը պատասխանատվություն չեն կրում դրանց համար:

6. Ուսումնառության գործընթացի անդրադարձ (ռեֆլեքսիա)՝ Ուսանողները դիտարկում են ոչ միայն այն, թե ինչ են սովորել առարկայի մասին, այլև այն, թե ինչպես է զարգացել ներգրավված արժեքների իրենց ընկալումը: Նրանք կարող են խորհել այն մասին, թե որ փաստարկներն են ազդել իրենց վրա, ինչ անորոշություններ են մնում, և ինչպես է իրավիճակը վերաբերում իրենց կյանքին կամ ապագա մասնագիտական գործունեությանը:

Այս փուլերն օգնում են քննարկումը վերածել նպատակասլաց ուսումնառության գործընթացի: Դրանք նաև ցույց են տալիս, որ էթիկական դատողությունը պարտադիր չէ, որ առանձնացված լինի ակադեմիական ուսուցումից. այն կարող է զարգանալ առարկայական հարցերի մանրակրկիտ քննության միջոցով [1–3]:

Ինչո՞ւ է այս մոտեցումը կարևոր ապագա մասնագետների համար

VaKE-ի կիրառելիությունը դուրս է գալիս դպրոցական կրթության սահմաններից: Համալսարանի ուսանողները, որոնք պատրաստվում են հոգեբանության, կրթության, սոցիալական աշխատանքի, հանրային կառավարման և այլ ոլորտների կարիերային, ի վերջո բախվելու են իրավիճակների, որտեղ մասնագիտական գիտելիքը պետք է համադրվի էթիկական դատողության հետ:

Օրինակ, ապագա ուսուցիչը կարող է կարիք ունենալ հավասարակշռելու գաղտնիությունը աշակերտին պաշտպանելու պատասխանատվության հետ: Հոգեբանը կարող է բախվել մի իրավիճակի, որը ներառում է մրցակցող կարիքներ, մասնագիտական սահմաններ և հաճախորդի բարեկեցություն: Դպրոցի ադմինիստրատորը կարող է կարիք ունենալ դիտարկելու արդարությունը՝ աշակերտների միջև կոնֆլիկտին արձագանքելիս:

Նման իրավիճակներում մասնագիտական սկզբունքների անգիր անելը բավարար չէ: Անհատները պետք է ճանաչեն ներգրավված արժեքները, հասկանան

PROVE ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից: Այնուամենայնիվ, արտահայտված տեսակետներն ու կարծիքները պատկանում են բացառապես հեղինակ(ներ)ին և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Կրթության և մշակույթի եվրոպական գործադիր գործակալության (EACEA) դիրքորոշումը: Ո՛չ Եվրոպական միությունը, ո՛չ էլ դրամաշնորհ տրամադրող մարմինը պատասխանատվություն չեն կրում դրանց համար:

համապատասխան կանոնները, գնահատեն առկա ապացույցները և հիմնավորեն իրենց որոշումները:

VaKE-ը կարող է հնարավորություն ընձեռել պրակտիկայում կիրառել այս կարողությունները կրթական միջավայրում՝ նախքան սովորողները կբախվեն նմանատիպ մարտահրավերների մասնագիտական կյանքում: Համալսարանական ուսուցիչների կրթության մեջ դրա կիրառման հետազոտությունները ուսումնասիրել են, թե ինչպես երկընտրանքների վրա հիմնված առաջադրանքները կարող են աջակցել մասնագիտական գործունեության անդրադարձին և բարոյական ու առարկայական ուսուցման ինտեգրմանը [2, 4]:

Հոգեբանական տեսանկյունից մոտեցումը վերաբերում է նաև դիմացինի տեսանկյունն ընկալելու (perspective-taking), ինքնանդրադարձող մտածողության, հաղորդակցման և պատասխանատու որոշումների կայացման զարգացմանը: Երբ ուսանողներին խրախուսվում է ուշադիր լսել, ձևակերպել իրենց դատողությունները և ներգրավվել սեփականից տարբերվող տեսակետների հետ, նրանք հնարավորություն են ստանում զարգացնելու թե՛ իրենց, թե՛ ուրիշների ավելի խորացված ընկալումը:

Չպետք է ենթադրել, որ այս արդյունքներն ինքնաբերաբար ի հայտ են գալիս ցանկացած լսարանային քննարկումից: Դրանք կախված են երկընտրանքի մտածված ձևավորումից, պատշաճ ուղղորդումից, հավաստի տեղեկատվության հասանելիությունից և այնպիսի միջավայրից, որտեղ մասնակիցները կարող են արտահայտել իրենց տեսակետները՝ առանց նվաստացման կամ խտրականության վախի:

VaKE-ը և երկխոսության մշակույթը

Հարգալից անհամաձայնություն արտահայտելու կարողությունը հատկապես կարևոր է բազմազան կրթական համայնքներում: Ուսանողները կարող են մոտենալ

PROVE ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից: Այնուամենայնիվ, արտահայտված տեսակետներն ու կարծիքները պատկանում են բացառապես հեղինակ(ներ)ին և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Կրթության և մշակույթի եվրոպական գործադիր գործակալության (EACEA) դիրքորոշումը: Ո՛չ Եվրոպական միությունը, ո՛չ էլ դրամաշնորհ տրամադրող մարմինը պատասխանատվություն չեն կրում դրանց համար:

նույն երկրընտրանքին տարբեր փորձառություններով, առաջնահերթություններով, մշակութային ծագմամբ և պատասխանատվության ընկալումներով:

Նման տարբերությունները պարտադիր չէ, որ խոչընդոտ լինեն ուսումնառության համար: Երբ դրանք կառուցողականորեն են կառավարվում, կարող են դառնալ հնարավորություններ՝ քննելու ենթադրությունները և հասկանալու, թե ինչու մարդիկ կարող են նույն իրավիճակը տարբեր կերպ մեկնաբանել:

VaKE-ը խրախուսում է սովորողներին առաջ շարժվել պարզապես սեփական կարծիքը պաշտպանելուց: Նրանք պետք է լսեն մյուսներին, հարցեր տան, գնահատեն փաստարկները և դիտարկեն, թե արդյոք իրենց դիրքորոշումները մնում են համոզիչ՝ նոր ապացույցների լույսի ներքո [1–3]:

Սա հատկապես վերաբերում է խաղաղության կրթությանը: Խաղաղությունը պարզապես բացահայտ կոնֆլիկտի բացակայությունը չէ. այն ներառում է նաև տարաձայնություններին անդրադառնալու կարողությունը՝ առանց մյուսներին ապամարդկայնացնելու, տարբեր մարդկանց արժանապատվությունը ճանաչելու և առաջընթացի պատասխանատու ուղիներ փնտրելու: ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2023 թվականի «Խաղաղության, մարդու իրավունքների և կայուն զարգացման համար կրթության վերաբերյալ» հանձնարարականը ընդգծում է կրթության դերը գիտելիքների, հմտությունների, արժեքների, վերաբերմունքի և վարքագծի զարգացման գործում, որոնք աջակցում են խաղաղությանը, երկխոսությանը, մարդու իրավունքներին և համագործակցությանը [5]:

Դասարանը չի կարող լուծել յուրաքանչյուր սոցիալական կոնֆլիկտ, և մեկ կրթական մեթոդը չի կարող երաշխավորել խաղաղ վարքագիծ: Այնուամենայնիվ, կառուցարկված երկխոսությունը կարող է օգնել սովորողներին կիրառել հմտություններ, որոնք կարևոր են ժողովրդավարական մասնակցության, փոխադարձ հասկացողության և կոնֆլիկտների կառուցողական լուծման համար:

PROVE ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից: Այնուամենայնիվ, արտահայտված տեսակետներն ու կարծիքները պատկանում են բացառապես հեղինակ(ներ)ին և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Կրթության և մշակույթի եվրոպական գործադիր գործակալության (EACEA) դիրքորոշումը: Ո՛չ Եվրոպական միությունը, ո՛չ էլ դրամաշնորհ տրամադրող մարմինը պատասխանատվություն չեն կրում դրանց համար:

Այս իմաստով, VaKE-ը հնարավորություն է ընձեռում կապել արժեքային կրթությունը ամենօրյա պրակտիկայի հետ, որի միջոցով կարող է զարգանալ երկխոսության մշակույթը:

PROVE ծրագիրը և հայաստանյան կրթական համատեքստը

Էրազմուս+ PROVE ծրագրի նպատակն է Հարավային Կովկասի բարձրագույն կրթության ոլորտում արժեքային կրթության ամրապնդումը: Դրա գործունեությունը ներառում է կրթական մոտեցումների մշակումը և մանկավարժներին աջակցելը՝ արժեքները ուսուցման և ուսումնառության մեջ ինտեգրելու գործում:

ՀՊՄՀ-ն ակտիվորեն ներդրել է VaKe մոդելը գործող ուսուցիչների վերապատրաստման գործընթացում: Այս մոտեցումը պրակտիկայում արմատավորելու համար ՀՊՄՀ-ն 2026 թվականի ընթացքում իրականացրել է թիրախային վերապատրաստման ծրագրեր: 2026 թվականի փետրվարի 25-ին համալսարանն անցկացրեց «Արժեքների և գիտելիքի կրթության (VaKe) մոդել. տեսություն և պրակտիկա» խորագրով մասնագիտացված դասընթաց, որը համախմբեց 77 դպրոցական ուսուցիչների տարբեր առարկայական ոլորտներից՝ ուսումնասիրելու մոդելի հոգեբանական հիմքերը և ուսուցման ընթացքում երկընտրանքների պատմությունների կիրառումը [6]:

Զարգացնելով այս նախնական նախաձեռնությունը՝ 2026 թվականի հունիսի 10–12-ին տեղի ունեցավ առավել ընդգրկուն եռօրյա ինտենսիվ վերապատրաստում գործող ուսուցիչների համար՝ VaKe մեթոդաբանությունը գործնականում ավելի ամրապնդելու նպատակով [7]:

Նմանատիպ դասընթացները հնարավորություն են տալիս մանկավարժներին ուսումնասիրելու, թե ինչպես երկընտրանքի վրա հիմնված ուսուցումը կարող է հարմարեցվել տարբեր առարկաների և կրթական միջավայրերի: Դրանք ընդգծում են

PROVE ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից: Այնուամենայնիվ, արտահայտված տեսակետներն ու կարծիքները պատկանում են բացառապես հեղինակ(ներ)ին և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Կրթության և մշակույթի եվրոպական գործադիր գործակալության (EACEA) դիրքորոշումը: Ո՛չ Եվրոպական միությունը, ո՛չ էլ դրամաշնորհ տրամադրող մարմինը պատասխանատվություն չեն կրում դրանց համար:

նաև մի կարևոր սկզբունք. արժեքային կրթությունը պարտադիր չէ սահմանափակել առանձին դասով կամ առարկայով: Կախված ուսումնական նպատակներից՝ այն կարող է ինտեգրվել ամենատարբեր ակադեմիական առարկաների դասավանդման մեջ [1, 3]:

Մանկավարժների համար մարտահրավերը իմաստալից իրավիճակներ բացահայտելն է, անկեղծ հետազոտության հրավիրող հարցեր ձևակերպելը և ուսանողներին քննարկումների միջով ուղղորդելը, որոնք միավորում են ապացույցները, էթիկական անդրադարձը և հիմնավորված որոշումների կայացումը:

Ապագա ուսուցիչներ և այլ մասնագետներ պատրաստող համալսարանների համար այս աշխատանքը հատկապես նշանակալից է: Մանկավարժները պետք է ոչ միայն հասկանան արժեքային կրթության սկզբունքները, այլև գործնական փորձ ձեռք բերեն այնպիսի ուսումնական գործողություններ նախագծելու և ուղղորդելու գործում, որոնք այդ սկզբունքները դնում են գործողության մեջ:

Իմացությունից դեպի ընկալում, ընկալումից դեպի պատասխանատվություն

VaKE-ի կրթական նշանակությունը կայանում է նրանում, որ այն հնարավորություն է ստեղծում կապելու այն, ինչ սովորողները գիտեն, այն բանի հետ, թե ինչպես են նրանք մտածում, դատում և գործում:

Ուսանողը կարող է իմանալ արդարության սահմանումը՝ առանց գիտակցելու, թե ինչպես մրցակցող շահերը կարող են բարդացնել արդար որոշումը: Մեկ ուրիշը կարող է հասկանալ հարգանքի կարևորությունը, бաћց դժվարանալ դա կիրառել տարաձայնության ժամանակ: Երրորդը կարող է ունենալ ուժեղ նախնական կարծիք, սակայն հետազոտության միջոցով պարզել, որ առկա ապացույցները պահանջում են ավելի նրբերանգային եզրահանգում:

PROVE ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից: Այնուամենայնիվ, արտահայտված տեսակետներն ու կարծիքները պատկանում են բացառապես հեղինակ(ներ)ին և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Կրթության և մշակույթի եվրոպական գործադիր գործակալության (EACEA) դիրքորոշումը: Ո՛չ Եվրոպական միությունը, ո՛չ էլ դրամաշնորհ տրամադրող մարմինը պատասխանատվություն չեն կրում դրանց համար:

Երկընտրանքների միջոցով ուսուցումը ուսանողներին հնարավորություն է տալիս քննելու այս բացերը: Այն խրախուսում է նրանց հարցեր տալ, տեղեկատվություն փնտրել, լսել տարբեր տեսանկյուններ և պատասխանատվություն ստանձնել իրենց առաջ քաշած փաստարկների համար:

Ուսուցիչների համար VaKE-ն առաջարկում է ուղի՝ պարզ տեղեկատվության փոխանցումից անցնելու դեպի ուսումնառության փորձառություններ, որոնք ներգրավում են ամբողջ անհատին: Ուսանողների համար այն հնարավորություններ է ստեղծում դառնալու ակտիվ մասնակիցներ գիտելիքի կառուցարկման և արժեքների քննման գործընթացում [1–3]:

Ի վերջո, կրթությունը պետք է պատրաստի սովորողներին ոչ միայն քննությունների ժամանակ հարցերին պատասխանելու, այլև մտածված արձագանքելու այն բարդ հարցերին, որոնց նրանք կբախվեն իրենց ողջ կյանքի ընթացքում:

Իրական կյանքի երկընտրանքները ուսումնական գործընթաց բերելով՝ VaKE-ն օգնում է տարածք ստեղծել այդ զարգացման համար: Այն հիշեցնում է մեզ, որ իմաստալից կրթությունը միայն ավելին իմանալու մասին չէ: Այն նաև ուշադիր մտածել, ուրիշներին հասկանալ, որոշումները հիմնավորել և պատասխանատու կերպով գործել սովորելու մասին է:

Այս հոդվածը պատրաստվել է Էրազմուս+ «Արժեքներին միտված կրթության խթանումը Հարավային Կովկասում» PROVE նախագծի շրջանակներում:

PROVE ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից: Այնուամենայնիվ, արտահայտված տեսակետներն ու կարծիքները պատկանում են բացառապես հեղինակ(ներ)ին և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Կրթության և մշակույթի եվրոպական գործադիր գործակալության (EACEA) դիրքորոշումը: Ո՛չ Եվրոպական միությունը, ո՛չ էլ դրամաշնորհ տրամադրող մարմինը պատասխանատվություն չեն կրում դրանց համար:

Գրականություն

1. Weyringer S, Patry JL, Weinberger A. Values and Knowledge Education. In: Alt D, Reingold R, editors. Changes in Teachers' Moral Role: From Passive Observers to Moral and Democratic Leaders. Rotterdam: SensePublishers; 2012. p. 165–179. https://doi.org/10.1007/978-94-6091-837-7_14

2. Weinberger A, Patry JL, Weyringer S. Improving Professional Practice through Practice-Based Research: VaKE (Values and Knowledge Education) in University-Based Teacher Education. Vocations and Learning. 2016;9:63–84. https://doi.org/10.1007/s12186-015-9141-4

3. Weyringer S, Patry JL, Pnevmatikos D, Brossard Børhaug F, editors. The VaKE Handbook: Theory and Practice of Values and Knowledge Education. Leiden: Brill; 2022. https://doi.org/10.1163/9789004515451

4. Marangio K, Cooper R. Using VaKE with secondary science pre-service teachers in Australia. In: Weyringer S, Patry JL, Pnevmatikos D, Brossard Børhaug F, editors. The VaKE Handbook: Theory and Practice of Values and Knowledge Education. Leiden: Brill; 2022. p. 142–152. https://doi.org/10.1163/9789004515451_012

5. UNESCO. Recommendation on Education for Peace and Human Rights, International Understanding, Cooperation, Fundamental Freedoms, Global Citizenship and Sustainable Development. Adopted 20 November 2023. https://www.unesco.org/en/legal-affairs/recommendation-education-peace-and-human-rights-international-understanding-cooperation-fundamental

6. ASPU. Teacher training under the framework of the Erasmus+ PROVE project. 26 February 2026. https://aspu.am/en/public/single_news/id/10/news_id/186

7. PROVE Project. Three-day teacher training at ASPU. 23 June 2026. https://prove.tesau.edu.ge/three-day-teacher-training-at-kh-abovyan-armenian-state-pedagogical-university/

PROVE ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից: Այնուամենայնիվ, արտահայտված տեսակետներն ու կարծիքները պատկանում են բացառապես հեղինակ(ներ)ին և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Կրթության և մշակույթի եվրոպական գործադիր գործակալության (EACEA) դիրքորոշումը: Ո՛չ Եվրոպական միությունը, ո՛չ էլ դրամաշնորհ տրամադրող մարմինը պատասխանատվություն չեն կրում դրանց համար: